Ալեքսանդր Ծատուրյան

Սոխակին

Ո՞ւզում ես դու, սիրուն սոխա՛կ,
Տեսնել եղեմ ծաղկավառ,
Շնչել վարդի բույրն անուշակ
Թռի՛ր դեպի հայ աշխարհ:

Ուզո՞ւմ ես դու հնչել անվախ
Երգըդ անկեղծ ու ազատ,
Երգել սիրո ժամեր խաղաղ
Թռի՛ր դեպի Այրարատ:

Այնտեղ պայծա՛ռ, այնտեղ անո՛ւշ
Քեզ կըժպտի ճոխ գարուն.
Այնտեղ վարդի ծոցում քնքուշ
Դու կըգտնես սեր անհուն:

Այնտեղ երկինքն է կապուտակ,
Պայծառ արև ու աստղեր.
Այնտեղ ծիծաղ, ժըպիտ, բերկրանք.
Այնտեղ կյանքն է անվերջ սեր:

Թռի՛ր, սոխա՛կ, դու հարազատ
Երգիչ սիրո զգացման.
Թո՛ղ բիրտ երկրում ագռավն ազատ

Հնչե սիրով յուր դաղան…

1889, 20 մարտի

Մոսկվա